




**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍԵՒ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱՐԱԹԱԹԵՐԹ**

ՎԵՏԱՓԱՂ ՏԵՐ



Մեր ժողովրդի հազարամյակների պատմության մեջ բացառիկ են եղել Եկեղեցու դերն ու նշանակությունը՝ ոչ միայն հոգեւոր, գիտամշակութային, այլև պատմաքաղաքական, հասարակական, սոցիալական, բարոյա-հոգեբանական առումներով: Այդ բացառիկության ձեռք բերման գործում անգնահատելի դերակատարություն են ունեցել մեր փառապանծ հովվապետերի իմաստությունն ու հեռատեսությունը, ողջախոհությունն ու դիվանագիտությունը, սերն ու նվիրումը ոչ միայն իրենց առաքելությանը, այլև հայրենին ու ժողովրդին՝ քաջ գիտենալով, որ իրենց վարձքը հաճախ շատ դառն է լինելու:

Լավ ճանաչելով նաեւ Ձեզ՝ գիտենք ու վստահ ենք, որ հանուն Եկեղեցու ու հայրենիքի շենության, հանուն պետականության ամրապնդման ու ժողովրդի հավերժագնա ընթացքի՝ Դուք եւս Ձեր նախորդներից ոչ պակաս, նույնիսկ ավելին, կարող եք եւ անում եք անհնարինը՝ հնարավոր դարձնելու համար բազում ծրագրեր ու մտահղացումներ, եւ ամենեւին էլ հոգ չէ, թե դրա համար որքան անքուն գիշերներ պետք է անցկացնեք, որքան ջիղ ու ներվ վատնեք, եւ վարձքը...

Ձեր վարձքը թող Աստված եւ ժամանակը հատուցեն: Ուստի շնորհավորելով Ձերո՛ր Սրբությանը՝ ծննդյան տարեդարձի առիթով, որդիական սիրով, խոնարհումով ու ակնածանքով աղոթում ենք, որ Տերը Ձեզ՝ Իր Եկեղեցու անդամական ու անխնայ մշակիդ, մեծ հայրենասերիդ, ի հեճուկս գազրախոսների, պարգևի ամուր կամք ու տոկունություն՝ Ձեր բազում ծրագրերն ու մտահղացումները ի կատար ածելու համար: Ձեզ երկար ու երկար տարիներ հաստատուն ու անսասան պահի Լուսավորչի գահին ու Ձերո՛վ վսեմ կոչման մեջ: Թող Տերը շնորհի Ձեզ առավել առողջություն, սեր ու իմաստություն, համբերություն ու հոգու խաղաղություն, որպեսզի Ձեզ վստահված հոտին ուղղափառ վարդապետությամբ, հայրական հոգատարությամբ ու խնամքով առաջնորդեք դեպի գալիք ժամանակներ:

Որդիական սիրով՝
«Մատչիմք ի համբոյր Ձերո՛ր օծեալ սուրբ աջոյն»
«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրակազմ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Նամակն Ադրբեջանի հոգեւոր առաջնորդին

Օգոստոսի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նամակ է հղել Կովկասի մահմեդականների վարչության Նախագահ, Ադրբեջանի հոգեւոր առաջնորդ Շեյխ-ուլ-Իսլամ Ալլախշուբյուր Փաշա Չաղեին՝ կոչ անելով ջանքեր գործադրել, որպեսզի երկրի իշխանությունների կողմից չվտանգվի դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը:

Ամենայն Հայոց Հայրապետի Նամակում մասնավորապես ասվում է. «Սահմանամերձ բնակավայրերի անդադար գնդակոծությունը ադրբեջանական կողմից, դիվերսիոն գործողությունները, հրադադարի ռեժիմի խախտման տեսական փորձերը լուրջ վտանգ են ներկայացնում մեր տարածաշրջանի փխրուն, բայց թանկ ձեռքբերված խաղաղության համար:


Մենք խորապես անհանգստացած ենք լարված իրավիճակով, որի հետեւանքով զոհվում են զինվորներ, խաթարվում է սահմանամերձ բնակչության խաղաղ կյանքը: Աստվածատուր մարդկային կյանքը սուրբ է, իսկ դրա իրավունքը՝ սրբազան, եւ ոտնձգությունները մարդկային կյանքի հանդեպ անթույլատրելի են:

Սաղարանները եւ մարտական գործողությունները չեն կարող այլընտրանք լինել դարաբաղյան հակամարտության կարգավորմանը՝ խաղաղ, բանակցային ճանապարհով՝ ըստ միջազգային նորմերի:

Հավատարիմ մնալով Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ի միջնորդությամբ անցկացվող տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպումների խաղաղարար ոգուն՝ Մենք դիմում ենք Ձեզ՝ որպես Ադրբեջանի հոգեւոր առաջնորդի, ջանքեր գործադրել, որ Ձեր երկրի իշխանությունները, հարգելով ավելի վաղ ձեռք բերված պայմանավորվածությունները, պահպանեն հրադադարի ռեժիմը եւ իրենց գործունեությամբ չխափանեն դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացը, խաղաղությունն ու կայունությունը տարածաշրջանում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գորակցությունն է հայտնում սահմանապահ զինվորներին եւ զոհված մարտիկների ընտանիքներին

Վերջին օրերին հայ-ադրբեջանական պետական սահմանին եւ դարաբաղա-ադրբեջանական ուժերի շփման գծում տեղի ունեցած ցավալի իրադարձությունների առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գորակցությունն է հայտնում հայրենիքի պաշտպանության համար մարտական գործողությունների ընթացքում իրենց կյանքը նվիրաբերած հայորդիների ընտանիքներին եւ մերձավորներին: «Խորապես սգում ենք հայրենյաց սահմանների պաշտպանության համար զոհված հայորդյաց մահը: Մեր սիրելի, հերոս զավակները քաջարի ոգով դիմակայեցին հակառակորդին՝ ապահովելու մեր երկրի ու ժողովրդի անդորրը: Նրանց անունները միշտ աղոթքով պիտի հիշվեն հայորդյաց շուրթերին, եւ նրանց անմահ հիշատակի առջեւ սերունդներ պիտի խոնարհվեն», - ասվում է Վեհա-



փառ Հայրապետի ուղերձում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր օրինությունն է բերում հայոց աշխարհի սահմանները պաշտպանող զինվորներին՝ մաղթելով, որ Ամենախնամ Աստված պահապան լինի նրանց՝ ապահովության մեջ շարունակելու իրենց նվիրյալ ծառայությունը հայրենաբնակ մեր ժողովրդի խաղաղ եւ բարօր կյանքի համար:

Նորին Սրբության տնօրինությամբ առաջիկա կիրակի հայոց եկեղեցիներում կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ զոհված հերոսների հոգիների խաղաղության եւ հանգստության համար, տեղի ունեցան այցելություններ նրանց ընտանիքներին:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍԵՒ
ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Յուրաքանչյուր ազգ ձգտում է հավերժության եւ ելնելով պետականության, անկախության ու ազատության, ազգային եւ կրոնական ինքնագիտակցության, ազգային արժանապատվության մասին պատկերացումներից՝ ստեղծում է իր անվտանգության համակարգը, ինչը սովորաբար հանդես է գալիս պետական կամ ազգային ձեւերով: Հայաստանի Հանրապետության եւ Արցախի պարագայում ազգային եւ պետական անվտանգության հասկացությունները համընկնում են, քանի որ հայկական երկու պետությունները

ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՄՆԳՈՒԹՅՈՒՆ

ազգային տեսանկյունից համարյա միատարր են (բնակչության 98%-ը հայեր են): Ուստի եւ նախընտրելի է **ազգային** անվտանգության հասկացությունը:

Ազգային անվտանգությունը հիմնականում բաժանվում է վեց գլխավոր ոլորտների.

1. ռազմական-ռազմավարական,
2. տնտեսական,
3. տեղեկատվական,
4. սոցիալական,
5. սոցիալ-հոգեբանական,
6. մշակութային:

Այս ցանկից զարմանալիորեն դուրս է մնացած հոգեւոր անվտանգության ոլորտը կամ ընդգրկված է մշակութային ոլորտում, որը, իմ խորին համոզմամբ, մեծ բացթողում է: Հոգեւոր անվտանգությունն ունի հիմնարար, կառուցողական բնույթ եւ նշանակություն, առանց որի ապահովման՝ համարյա անհնար է մյուս վեց ոլորտների լիարժեք գործունեությունը: Հիմնավորելով մեր հաստատումը:

Յուրաքանչյուր հասարակարգ հիմնվում է մի որեւէ հավատամքի՝ կյանքի ու օրենքների վերաբերյալ ընդհանուր պատկերացումների վրա եւ ներկայացնում գործող մի կրոն (աստվածապաշտական կամ ոչ աստվածապաշտական), որի հիման վրա էլ ձեւավորում է գաղափարախոսությունը, արժեքների համակարգը, ընկերային գոյածեւը եւ քաղաքակրթությունը: Սա հանրագիտարանային ընդունված ճշմարտություն է:

Ցավոք, մեր հասարակարգը

պետականորեն եւ ազգովին դեռ չի ընդունել հայ ազգային գաղափարախոսություն, որից պետք է բխեն ազգի բարոյական նորմերը, պետականության եւ պետության քաղաքական-ռազմավարական հայեցակարգը, կրթական եւ մշակութային հայեցակարգը, ազգային կենցաղավարության հայեցակարգը, համահայկական տնտեսական հայեցակարգը, պաշտպանության ու անվտանգության հայեցակարգը: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ: Պատասխանելու համար պետք է անդրադարձ կատարել վաղ անցյալին: Շարունակությունը՝ էջ 2

«Եվ բազում սուտ մարգարեներ պիտի ելնեն ու շատերին պիտի մոլորեցնեն: Եվ անօրինության շատանալուց՝ շատերի սերը պիտի ցամաքի: Բայց ով մինչև վերջ համբերեց, նա պիտի փրկվի»

Մատթ. ԻՂ 11-13

Արարչագործությունն Աստծո մասին մեծագույն վկայությունն է... Իրերի տեսանելի աշխարհը վկայում է աներեւույթ Ստեղծագործ Է-ի գոյությունը. Նրա ներկայությունն զգում ենք ամենուր, երկրային կյանքի բոլոր շրջափուլերում եւ հանգրվաններում: Երկնային Հայրը խոսում է մեզ հետ, լսում մեր աղոթքները, ներում մեր անհնազանդությունն ու մեղքերը՝ շնորհելով Իր անսահման ողորմածությունն ու սերը:

Աստվածաշնչում իրենց ուրույն տեղն ունեն մարգարեական գրքերը: Հինկտակարանյան բազմաթիվ հատվածների համաձայն՝ Աստված Իր կամքը հաճախ հայտնել է մարգարեների միջոցով: Մարգարեների խոսքն ու գործը վճռորոշ նշանակություն են ունեցել հին հրեաների կյանքում. նրանց միջոցով էր երկնային Հայրը խոսում ժողովրդի հետ, հրահանգներ տալիս: «Տերը բոլոր մարգարեների ու տեսանողների միջոցով Խորայելին ու Հուդայի երկրին զգուշացրեց՝ ասելով. «Հարձե՛ք ձեր չար ճանապարհներից, պահեցե՛ք իմ պատվիրանները, իմ կանոններն ու օրենքները, որ պատվիրեցի ձեր հայրերին, եւ որոնք ձեզ հաղորդեցի իմ ծառա մարգարեների միջոցով» (Դ Թագ. ԺԷ 13):

Մարգարեները աստվածը նույնապես էին եւ հասարակության մյուս անդամներից տարբերվում էին իրենց խստակեցությամբ, վարքով, խոսարիությամբ, մեծագույն հավատով, անձնվիրու-

ՈՂՈՐՄԻՐ ՆԱԵՎ ՄՈՒՈՐՅԱԼՆԵՐԻՆ...

թյամբ: Սուրբ Գրքում տեղեկություններ կան մարգարեական դպրոցների մասին (Ա Թագ. Ժ 5, ԺԹ 20, Դ Թագ. Բ 3), իսկ մարգարեներից շատերին այդ շնորհը տրվում էր ի վերուստ. «Պատասխան տվեց Ամոսը եւ ասաց Ամասիային. «Ես ո՛չ մարգարե էի եւ ո՛չ մարգարեի որդի, այլ հովիվ էի եւ թուփ էի քաղում. Տերը վերցրեց ինձ հոտից եւ ասաց ինձ. «Դու գնա՛ եւ մարգարեացի՛ր Իսրայելի իմ ժողովրդի մասին» (Ամոս Է 14-15):

Աստվածաշնչում վկայություններ կան նաեւ մարգարեուհիների մասին. Հին Կտակարանում հիշատակվում են Մարիամը, Դեբորան, Ողղան, իսկ Նոր Կտակարանում՝ Աննան, Փիլիպպոսի դստերը (Գործք. ԻԿ 9):

Հայտնության ժամանակ Սուրբ Հոգու ներգործությամբ ստացված պատվիրանները, հրահանգները մարգարեները հաղորդել են գրավոր կամ բանավոր խոսքով, տարաբնույթ հրաշքներով, խորհրդանշաններով:

Հին Կտակարանում ամփոփված է մարգարեական 16 գիրք: Մարգարեներից չորսը՝ Եսային, Երեմիան, Եզեկիելը, Դանիելը կոչվում են Մեծ, իսկ մնացյալ տասներկուսը՝ Փոքր մարգարեներ: Հայ թարգմանական եւ ինքնուրույն մատենագրության մեջ առանձնահատուկ կարեւորություն ունեն մարգարեությունների մեկնությունները: Արժեքավոր են Եսայիի (Գեւորգ Սկեւացի, Եսայի Նչեցի, Գրիգոր Տաթեւացի), Երեմիայի (Մխիթար Գոշ, Անանու), Դանիելի (Վարդան Արեւելցի, Հովհաննես Ծործորեցի), Եզեկիելի (Եփրեմ Ասորի, Ստեփանոս Սյու-



նեցի) մարգարեությունների մեկնությունները: Բազմաթիվ ճառեր ու քարոզներ են շարադրվել մարգարեություններից քաղված բնաբաններով: Ըստ եկեղեցական հայրերի՝ մարգարեական գրքերի հիմնական բովանդակությունը Հիսուս Քրիստոսի մասին վկայելն է. այդ հատվածներից են՝ Եսայի Է 14, Թ 6-7, ԺԿ 1-5, ԽԳ 1-6, Երեմիա ԻԳ 5-6, ԼԿ 15, Եզեկիել ԼԴ 23-24, ԼԷ 21-24, Դանիել Է 13-14, Թ 20-24, Միքիա Ե 2-4, Անգե Բ 6-9, Զաքարիա Զ 12-15, Թ 9, ԺԲ 10:

Երկնային Հայրը մարգարեների միջոցով նախապես հայտնում է Մեսիայի գալստյան մասին. «Աստված բազմապիսի ձեւերով եւ այլազան օրինակներով նախապես խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով. այս վերջին օրերին մեզ հետ խոսեց Իր Որդու միջոցով, որին ժառանգ նշանակեց ամեն ինչի, եւ Որի մի-

ջոցով ստեղծեց տիեզերքը» (Եբր. Ա 1): Եբրայեցիների ուղղված նամակի հեղինակն առաջին գլխում ընդգծում է, որ Աստծո Որդու խաչելությունից եւ հարությունից հետո այլեւս պետք չէ նոր մարգարեներ փնտրել կամ հավատ ընծայել կեղծ մարգարեների կանխասացություններին, քանզի բոլոր մարգարեություններն իրագործվեցին փրկագործության խորհրդով:

Սուրբ Գրքում որպես առաջին մարգարե հիշատակվում է Ենոքը. «Նրանց մասին մարգարեացել է նաեւ Ենոքը՝ յոթերորդը Ադամից սկսած, եւ ասել. «Ահա՛ վասիկ եկավ Տերը բյուրավոր սուրբ հրեշտակներով՝ դատաստան տեսնելու բոլորի հանդեպ եւ հանդիմանելու բոլոր ամբարիշտներին իրենց այն գործերի համար, որ ամբարշտությամբ գործեցին, եւ այն բոլոր խիստ

խոսքերի համար, որ նրա դեմ ասացին մեղավորները եւ ամբարիշտները» (Հուդա Ա 14-15): Ծննդոց գիրքը նրա մասին համառոտ տեղեկություն է հաղորդում. Ենոքը Հարեդի որդին էր, «...սալրեց երեք հարյուր վաթսուհինգ տարի: Ենոքը սիրելի եղավ Աստծուն: Նա անհայտացավ, որովհետեւ Աստված նրան տարավ իր մոտ» (Ե 21-24): Ուշագրավ է այն, որ Նոյի մյուս սերունդների մասին Սուրբ Գրքում ասվում է՝ «նա մեռավ», իսկ Ենոքի մասին՝ «...նա անհայտացավ, որովհետեւ Աստված նրան տարավ իր մոտ»: Ի տարբերություն մյուս ժառանգների՝ Ենոքը չմահացավ, այլ իր անսահման հավատի եւ աստվածահաճ կյանքի համար տարվեց երկնային Հոր մոտ, այսինքն՝ ազատագրվեց մահից, որը նախաձնողների անհնազանդության ու մեղանչումի հետեւանքն է: Այս մասին Աստվածաշունչը վկայում է. «Հավատո՛վ Ենոքը փոխարդեց երկինք, որպեսզի մահ չճաշակի. եւ նա ոչ մի տեղ չգտնվեց, քանի որ Աստված նրան տարել էր: Եվ նախքան իր տարվելը նրան վկայություն էր տրվել, որ ինքը հաճելի էր Աստծուն: Բայց առանց հավատի անհնար է հաճելի լինել Աստծուն, քանի որ նա, ով մոտենում է Աստծուն, պետք է հավատա, որ Աստված կա եւ վարձահատույց է լինում նրանց, ովքեր փնտրում են Իրեն» (Եբր. ԺԿ 5-6):

Սուրբգրային վկայությունների համաձայն՝ Աբրահամը եւս Տիրոջ մարգարեն էր (Ծննդ. Ի 7). նա աներեր հավատ ուներ, հնազանդվում էր Աստծուն՝ մշտապես խոնարհաբար ի կատար ածելով Նրա կամքը:

Երկնային Հայրը հայտնվում է նաեւ Իսահակին ու Հակոբին, սակայն վերջիններս երբեւէ չեն համարվում Աստծո մարգարե:

Շարունակությունը՝ էջ 4

Սկիզբը՝ էջ 1

Հայ ազգը ԽՍՀՄ բազմազգ խառնարանում, հանդիսանալով սովետական ժողովրդի մի մասը, աստիճանաբար կորցրել էր սեփական ազգային անվտանգությունը պահպանելու գործառնությունը: Դեռ ավելին՝ ազգային եւ հոգեւոր ցանկացած դրսեւորում պետության կողմից դիտվել է որպես հասարակարգի նկատմամբ թշնամություն եւ խստագույնս պատժվել:

1988 թ. Արցախյան ազգային-ազատագրական շարժումը հիմք դրեց հայ ազգի անվտանգության պահպանման հիմնահարցի նորովի ընկալմանը: Շարժման առաջին իսկ օրվանից համայն հայության համար գերխնդիր էր դարձել ընդհանրապես հայության, մասնավորապես՝ արցախահայության եւ աղբյուրահայության անվտանգության ապահովումը: Շարժման պատերազմական փուլում դրված էր արցախահայության ֆիզիկական պահպանության (բնաջնջումից զերծ պահելու) եւ գոյապահպանության հիմնահարցը: Բնակաբար, պատերազմ ապրած ժողովուրդը, ընթացքում ստեղծելով ազգային անվտանգության համակարգը եւ ծառայությունը, առաջնահերթություն տվել է ռազմական-ռազմավարական ոլորտին (զինված ուժեր, հետախուզություն եւ հակահետախուզություն, ռազմական քաղաքականություն, գաղտնի ծառայություններ եւ այլն):

Արցախյան պատերազմի փառավոր հաղթանակից հետո, որը ձեռք է բերվել մարդկային եւ նյու-

ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ



թական մեծ կորուստների գնով, առաջնահերթ խնդիր էր դրված դիվանագիտական ճանապարհով հաղթանակի ամրագրումը, հաշտության պայմանագրի ստորագրումը, քայքայված տնտեսության վերականգնումը եւ անվտանգության համակարգի լիարժեք ստեղծումն ու ամրապնդումը: Նորից անդրադառնանք կրոնի խնդրին: Իմ համոզմամբ՝ 1700-ամյա քրիստոնեական անցյալ ունեցող հայի համար նոր կրոնի ընտրության հարց չպետք է առաջանա: Անշո՛ւշտ, մեր կրոնը քրիստոնեությունն է՝ ի դեմս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: Հիմնավորենք մեր հաստատումը:

Եկեղեցին սովորաբար հանդես է գալիս որպես գաղափարաբանության եւ կազմակերպության

ամբողջություն:

Առաջին (գաղափարաբանություն): Ոչ մի հայի մոտ կասկած չի հարուցում այն պատմական իրողությունը, որ Հիսուս Քրիստոսի աշակերտներ Թադեոս եւ Բարդուղեմեոս առաքյալները Հայաստանում տարածել են քրիստոնեությունը եւ նահատակվել: Նրանք են հիմնադրել քրիստոնեական համայնքները եւ Առաքելական Եկեղեցին: Այնուհետեւ Հայաստան են եկել Հռիփսիմեյանց կույսերը: Պատմական Հայաստանի տարածքում քարոզել են նաեւ Պետրոս առաքյալը, Հովհաննեսը, Թովմասը, Շմավոն Նախանձահույզը եւ Մատթիան՝ այլ երկրներ գնալու ճանապարհին:

Մեջբերենք Պողոս առաքյալի ճառից մի հատված, որն արտա-

սանել է Աթենքի կենտրոնում՝ Արիսագոսում. «Մեկ արյունից ստեղծեց մարդկանց բոլոր ազգերը, որ բնակվեն ամբողջ երկրի վրա, հաստատեց նախակարգյալ ժամանակները եւ դրեց նրանց բնակության սահմանները, որ փնտրեն Աստծուն ու խարխափելով թերեւս զոհեն նրան» (Գործք ԻԷ 26-27): Կարծում ենք՝ ցանկացած հայի համար անվիճելի է հայության բնակության սահմանների հարցը:

Հայության կողմից երբեւէ կատարած նշանակալից իրադարձություններից մեկը Քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունումն է: 301 թվականին Տրդատ Գ-ի եւ Գրիգոր Լուսավորչի համատեղ կատարած ընտրության շնորհիվ է, որ հայությունը մտել է 21-րդ դար՝ որպես քրիստոնեական առաջնակարգ մշակույթ ունեցող ազգ:

Երկրորդ (կազմակերպություն): Մեր ազգային ինքնատիպությունը, անհատականությունը մեծապես կախված են եղել Եկեղեցու կառույցից ու առաքելությունից: Հայ Եկեղեցին դարեր ի վեր իր վրա էր վերցրել պետության դերը, երբ Հայաստանը կորցրել էր պետականությունը: Հայ Եկեղեցին հայկական թաքնված կազմակերպություն էր, իշխանություն էր, վարչություն էր՝ հաստատված հայության հոգեւոր կամավոր հպատակության վրա: Հայ Առաքելական Եկեղեցին բացառիկ դերակատարություն ունի պահպա-

նելու եւ զարգացնելու մեր լեզուն ու գրականությունը, արվեստները, դաստիարակությունը եւ ընկերային հարաբերությունները: Կատարելով ազգապահպանության սուրբ գործը՝ Հայ Եկեղեցին ազգը փրկել է ուրացումից եւ ուժացումից: Դարեր շարունակ Հայ Առաքելական Եկեղեցին, լինելով ազգային միակ կազմակերպությունը, առանց պետականության, միայնակ պայքարել է աղանդավորության եւ կրոնական խորթ այլ կազմակերպությունների դեմ եւ հաղթել: Մեծ է նաեւ Հայ Եկեղեցու դերը երկրի ինքնապաշտպանության գործում: Այդ պատճառով էլ հայության թշնամիները, քաջ գիտակցելով Եկեղեցու նաեւ քաղաքական ազդակ լինելու պարագան, իրենց սրերը ուղղել են եւ ուղղում են նրա դեմ:

Ահա թե ինչու հայկական պետությունը պետք է Հայ Առաքելական Եկեղեցուն՝ որպես հայկական ամենամեծ կազմակերպության, անվերապահորեն օժանդակի ամրապնդվելու:

Խղճի ազատություն եւ ցանկացած կրոն ազատ դավանելու պատրվակով Հայաստան (ՀՀ եւ ԼՂՀ) է թափանցել եւ պետական գրանցում ստացել մոտ 70 կրոնական կազմակերպություն, իսկ առանց գրանցման էլ գործում է ավելի քան 200 կրոնական խումբ, որոնց բացարձակ մեծամասնությունն աղանդավորական է, որոնք հոգեւոր-գաղափարական, նյութաֆինանսական եւ այլ աջակցություն են ստանում արտասահմանից:

Շարունակությունը՝ էջ 3

Սկզբը՝ թիվ 13-14

Հայ պրոլետարական գրողների համար ազդեցության մեկ ուրիշ աղբյուր էր ռուսական «Կուզնիցա» (Դարբնոց) խմբակ-ցության ղեկավարացիան, ինչի մեջ կային այսպիսի կետեր՝ «ձեռի դիմամիկա՝ հանրային կացության ձեռի փոփոխությունը բնորոշում է նաեւ արվեստի ձեւերը», պրոլետարական արվեստը նույնքան անհրաժեշտ է, որքան բանակը, «ոճը ինքը դասակարգն է», «պոեզիան պրոլետարիատի պրակտիկան է», բանաստեղծն էլ իր դասակարգի հոգեմիջնորդն է։ Արվեստի մեջ ուշադրություն էին դարձնում կշռույթին ու կառուցվածքին, պատկերի լարվածությանը, բառի ինչունականությանը՝ որպես երաժշտություն, ձեւը պետք է համապատասխանի դարաշրջանին (ՄԶ, թիվ 106, 1 հունիս)։ Եվ ոչ մի խոսք հայրենիքի մասին։

Առաջիններից մեկը Հայություն Սուրխաթյանն էր, ով փորձեց ճշտել «պրոլետարական» կոչված գրականության շոշափակները։ «Պրոլետարական ապագա գեղարվեստը ֆուտուրիզմի հետ չէ, նրա ճանապարհը անկախ է եւ տրամագծորեն հակառակ ուղղությամբ» (Հ. Սուրխաթյան, Ֆուտուրիզմը եւ հեղափոխությունը, «Նոր խոսք», 1920, թիվ 8, 11 հոկտեմբեր)։ Այս հոդվածում գրականագետը քննարկում է այն հարցը, թե ինչպես ապագայապաշտները (ֆուտուրիստները), ներկայանալով որպես պրոլետարական գրականություն ստեղծողներ, Ռուսաստանում հասան գրական իշխանության։

Այս կողմորոշմամբ, այսինքն՝ գրական իշխանությանն ապագայապաշտներից խլելու եւ պրոլետարական գրականությանը հաստիքից խլելու նպատակով Սուրխաթյանը գրախոսում է Ռ. Հակոբյանի թարգմանությամբ հայերեն լույս տեսած Ա. Գաստեյի «Բանվորագրակի պոեզիայից» (1920) ժողովածուն, ինչպես նաեւ 26 կոմիսարների հիշատակին նվիրված Նույն Հակոբյանի գործը եւ «Հավասարություն» պոեմը («Նոր խոսք», 1920, թիվ 11, 12, 13, 2, 8, 15 նոյեմբեր)։

Երկրորդ դեպքում հայրենիքն արվեստի բովանդակային միջուկում չէր, իսկ իտալացի ապագայապաշտները կոչ էին անում Իտալիան փրկել թանգարանային փտախ-

ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ XX ԴԱՐ

տից եւ արդիականացնել երկրի տնտեսությունը։ Ռուս ապագայապաշտներն ավելի տեսնում էին առաջնությունը Էին քարոզում եւ դրան տալիս ձեւական բնույթ։

«Նոր աշխարհ» թերթը (խմբագիր՝ Ս. Կասյան) գործունեությունն սկսում է ճիշտ դիրքորոշումով։ «Նոր աշխարհ»-ի նպատակը՝ խմբագրականում կարողում ենք։ «Ամենամանրակրկիտ կերպով պետք է ուսումնասիրել երկիրը, դրսեւորել նրա գաղտնի հարստությունները, պարզել նրա սիրհած ուժերը» (1922, թիվ 1, օգոստոս)։

Համանման կողմորոշում է որդեգրում նաեւ Երեւանում լույս տեսնող «Նոր ապագա» ամսագիրը (հետո՝ երկշաբաթաթերթ, խմբագիր՝ Ե. Զուբար)։ Պարբերականն ամբողջականությամբ արտացոլում է մոտակա գալիքի իրական պատկերը՝ գաղթականներ, անապաստաններ, սոցիալական եւ հոգեբանական դժվարություններ։

Հայ գրականության, թեկուզ պրոլետարական հայ գրականության հայկականությունը պահպանելու կոչ է անում հանրապետության ղեկավար Ա. Մյասնիկյանը։ «Պրոլետարական գրականության նվիրված «Մուրճ» ամսագրի N1-ի առթիվ» (ԽՀ, 1922, թիվ 267-268, 1, 2 դեկտեմբեր) հոդվածում, ակնարկելով Վշտունուն («Պիտերի մասին»), նա պարզ ու որոշ հարց է տալիս։ «Մենք կուզենայինք իմանալ, թե ինչու է այստեղ հայ գրականության պրոլետարականությունը կամ պրոլետարական գրականության հայկականությունը»։ Այս ամբողջ գրական նոր արտադրանքը նա համարում է «անգեղարվեստական»։ Մյասնիկյանը կոչ է անում անդադաճալ հայ իրականությանը, հայ կյանքի նոր երեւոյթներին, այսինքն՝ գոնե պահպանել հայրենասիրական գրականության պրոլետարական սկզբունքները։

«Մուրճ»-ի 1-ին համարին անդրադառնում է նաեւ Սուրխաթյանը։ Ընդհանուր դժգոհությունից հետո ահա նրա առաջարկությունը։ «Մեր նոր գրողների ձգտումը պետք է լինի միմյան հնի ժխտումը եւ ստեղծված նոր միջավայրի պատկերացումը՝ իրենց համար միանգամայն բնական եւ մատչելի ձեւերով։ Դա պրոլետարական արվեստ չի լինի, բայց նա նոր ուղիներ կհարթի դեպի պրոլետարականը» («Նոր աշխարհ», 1922, թիվ 2, էջ 138)։

Բայց ժամանակներն այլ էին, եւ հատկապես պրոլետարների համար հայրենաւորացումը փակել էր հայրենահիացումի ճանապարհը։ Ազգային սնապարծությունը վերածվել էր կոմսնապարծության։

Հայրենիքի խորհրդանշաններին փոխարինում են պղինձը, բրոնզը, երկաթը, արթնացող արեւելքը, շոգին, պոեզի-գնացքը, նաեւ՝ օդապոեզը (սավառնակ), տրակտորը, ռումբը, աեռոն, Էլեկտրականությունը, հրաբուխը, ժայթքումը, մեքենան, մոտոր-շարժիչը, արոպելլերը, ջուրան, կեպին, կաշվե բաճկոնը։ Այստեղից բառապաշարը՝ հրաբխապոեզիա, հրաբխաեռագ, հրաբխաթայթքում, աեռոկյանք, թռչնասայլ... Այսպես գրական տաղանդներին փոխարինում էին գիրկապ անող կիսագրագետ բանվոր գրողները։

Այս ընթացքում «Երեքը» տպագրեցին իրենց ղեկավարացիան, տպագրեցին իրենց բյուլետենները եւ անցան «շեփորահաղեսների»։ Երկրորդ երեկոյի ժամանակ Չարենցը հիմնավորում է այն տեսակետը, ըստ որի՝ «...Տերյանը սիրային խնդրում մագոխիստ է, իր քաղաքական ձգտումներով՝ նացիոնալիստ» (ԽՀ, 1922, թիվ 162, 22 հուլիս)։ Սույն հաղորդման մեջ կա մի հատված, որ նշանակում է՝ մթնոլորտը, հետաքրքրությունները փոխվել էին. «...Երբ «Երեքը» անցնում էին արտասանություններին, բեմ է ելնում լուս-



Ալեքսանդր Մյասնիկյան

ծողկում ընկ. Մակինցյանը եւ հայտարարում. «Ո՛ւմ եք ուզում լսել. ուզում եք, որ «Երեքը» կարդան իրենց բանաստեղծությունները, թե ես՝ Տերյանինը։ Դահլիճը մի րոպե շփոթության մեջ է ընկնում։ Սակայն մի վայրկյան անց դահլիճի ավելի մեծ մասը սկսում է որոտընդոստ ծափերով բեմ կանչել «Երեք»-ին եւ լարված ոգեւորությամբ լսում է նրանց արտասանությունը»։ Տերյանն արդեն իրենցն էր, կար ու կար, իսկ նորը հետաքրքրում է, անսովոր գերում է։ Ժամանակը նորին էր, այլ հատկանիշների հետ մեկտեղ նորը նաեւ ապագային էր։ Ահա այս մթնոլորտում 1921-1924 թթ. գրվել է նոր ժամանակների առաջին վեպը՝ Ե. Չարենցի «Երկիր Նաիրի»-ն, ինչն ուղղություն պիտի հաղորդեր հետագա հայ գրականությանը։ Այդ մթնոլորտն էր պատճառը, որ Չարենցն ավելի չի խորացրել իր վեպի բուն ազգային յուրահատկությունները, դեռ ավելին՝ ծաղրել է ազգային երազանքները մարմնավորող գլխավոր հերոսին՝ Մազուրի Համոյին։ Բայց այդ ծաղրի, մյուսներին ուղղված երգիծական հայացքի տակ ազգային մեծ ցավի ողբերգությունն է։

Շարունակությունը՝ էջ 5

Սկզբը՝ էջ 2

Հավաստի աղբյուրներից հայտնի են, որ նման կազմակերպությունները եւ խմբերը հիմնականում (մոտ 80%) ֆինանսավորվում են Թուրքիայի կողմից՝ բնականաբար երրորդ երկրի միջոցով։ Նրանք, առանց բացառության, բացի հոգեւոր գործունեությունից, զբաղվում են տնտեսական, ֆինանսական եւ այլ գործունեությամբ, իսկ որոշներն էլ՝ քաղաքականությամբ՝ հովանավորելով այս կամ այն քաղաքական ուժին։

Հայաստանում աղանդներն ընդգրկված են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում։ Մի՞թե սա ազգային անվտանգության տեսանկյունից դիվերսիա չէ։

Պետությունը պետք է Հայ Եկեղեցու հետ համակարգված պայքարի աղանդավորության եւ բազմաթիվ խորք կրոնական այլ կազմակերպությունների դեմ, որոնք խղճի ազատության եւ ցանկացած կրոն ազատ դավանելու շղարշի տակ ներթափանցել են Հայաստան ու Արցախ եւ քայքայում են հայկական պետականության ու Հայ Եկեղեցու հիմքերը։ Պայքարը նրանց դեմ պետք է համազգային խնդիր դառնա։

Մի մտահոգիչ փաստ եւս. Հայաստանում եւ Արցախում գործում են Հայ Ավետարանական եւ Հայ Կաթողիկե Եկեղեցիները՝ իրենց տարբեր ճյուղավորումներով։ Հայ Ավետարանական եւ Հայ Կաթողիկե Եկեղեցիները, ստեղծվելով բողոքական եւ կաթոլիկ միջավայրերում, օտար եր-

ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

կրներում նպաստել ու նպաստում են հայի ազգային նկարագրի եւ ինքնության պահպանմանը։ Հայրենիքում նրանց գործունեությունը, բնականաբար, այլ բնույթ պիտի կրի, քանի որ կա իրական ազատության եւ անկախության ձգտող պետություն՝ Հայաստան եւ ազգային Եկեղեցի՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի։ Այդ եկեղեցիների գոյությունը եւ հոգեւոր քարոզչական գործունեությունը հայրենիքում, դավանաբանական տեսանկյունից մրցելով Հայ Առաքելական Եկեղեցու հետ, վերջինիս մղում է ակտիվացնելու քարոզչական, ավետարանչական գործունեությունը (որը, ի դեպ, այսօր թույլ է), բայց մյուս կողմից՝ Մայր Հայրենիքում հայությանը բաժանում են տարբեր (եթե, ո՛չ իրարամերժ) կրոնական համայնքների, դրանով իսկ խախտում ազգի միասնությունը եւ բզկտում Հայ Եկեղեցին։

Քրիստոնյաներին Աստվածաշնչից հայտնի է Հիսուսի խոսքը. «Ինքն իր մեջ բաժանված ամեն թագավորություն ավերվում է, եւ ինքն իր մեջ բաժանված ամեն քաղաք կամ տուն կանգուն չի մնա...»։ Իսկ Հայաստանում (ՀՀ եւ ԼՂՀ) ազգային միասնություն է պետք։



րազանցի 40%-ը։ Համոզված կարող ենք նշել, որ անմիջապես կգործի «Արաբական գարունի» սցենարը, եւ կիրականանա մեր թշնամիների (անկախ ազգությունից) երազանքը՝ Հայաստան պետությունը կվերանա։

«Արաբական գարունը» չէր լինի, եթե տվյալ երկրները ժամանակին լուծեին հոգեւոր անվտանգության խնդիրները։

Հիմա, երբ Նույն առաքելական երկրի *սուլի* մահմեդականն ուրբաթ օրը նամազի ժամանակ պայթեց-

նում է *շիա* մահմեդականի մզկիթը եւ սպանում հարյուրավոր հավատացյալների... Ո՞վ կարող է երաշխավորել, որ Հայաստանում այդպես չի լինի, երբ այլադավանների թիվը հատի կրիտիկականի սահմանը։ Կոգնի մեզ հուտ քրիստոնեական կոչվող հավա՞տքը։ Այդ դեպքում ինչո՞ւ են ամեն տարի իրար դեմ պատերազմում կաթոլիկ եւ բողոքական իռլանդացիները։ Նրանց տարբեր դավանանքի պատճառով է, որ միևնույն այսօր երկու Իռլանդիաները չեն կարողանում միավորվել։

Հոգեւոր անվտանգության եւությունը կայանում է նրանում,

Աշոտ ՍԱՐԳՍՅԱՆ

Սկիզբը՝ թիվ 14

Մատենադարանի այցելուներին գրավում ու զարմացնում են հայկական ձեռագրերի խիստ տարբեր չափերն ու ծավալները: Խոշոր եւ փոքրիկ ձեռագրերի օրինակ են հանդիսանում Հովհաննես Մանգասարենց գրչի կողմից ընդօրինակված «Ճառքն-տիրը» եւ «Աղոթագիրքը»:

Մատենադարանի գիտաշխատողները հետետողականորեն հետազոտել եւ հրապարակել են միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի բազմաթիվ հուշարձաններ, միջնադարի հայ գրականության, լեզվի ու քերականության լավագույն նմուշները, ինչպես նաեւ ճշգրիտ գիտություններին՝ մաթեմատիկային, տիեզերագիտությանը, բժշկությանը, տոմարագիտությանը վերաբերող երկեր: Անկարելի է հատուկ չմատնանշել, որ Մատենադարանի ձեռագրերը հայ հիմնական մանրանկարչական արվեստը ներկայացնող անսպառ նյութ են նաեւ, առանձին ուսումնասիրության մի ուրույն բնագավառ: Այդ առումով եւս վիթխարի աշխատանքներ են կատարվել, ընթերցողի գրասեղանին դրվել մի շարք բարձրարժեք ալբոմներ: Որաշակի ձեռքբերումներ են եղել նաեւ միջնադարյան հայ երաժշտության ուսումնասիրության բնագավառում:

Պետք է նշել, որ Մատենադարանում պահպանվում են ոչ միայն հայերեն, այլ օտարալեզու ձեռագրեր: Առաջին օտարալեզու

ՀԱՅ ՄՏՔԻ ԵՎ ՈԳՈՒ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ Դարանի դեմ՝ Մատենադարան

ձեռագրերը Մատենադարանում հայտնվել են 19-րդ դարի վերջերից: Ժամանակի ընթացքում օտարալեզու ձեռագրերի հավաքածուն բավական հարստացել է եւ ներկայումս պարսկերեն, վրացերեն, եթովպերեն, սլավոներեն, արաբերեն եւ այլ լեզուներով ձեռագրերը զգալի թիվ են կազմում:

Մատենադարանի գլխավոր ավանդապահ, ձեռագրագիտության եւ Մայր ցուցակի բաժնի վարիչ Գեորգ Տեր-Վարդանյանը նշում է, որ հայկական ամբողջական ձեռագրերի թիվն այժմ հասնում է 11 234-ի, իսկ հայերեն եւ օտար լեզուներով ձեռագրերի թիվը կազմում է 20 280: Օտարալեզու ձեռագրերից քանակական առումով մեծ թիվ են կազմում արաբատառ ձեռագրերը (պարսկերեն, թուրքերեն, արաբերեն): Մատենադարանի գիտահետազոտական գործունեության հիմնական ուղիներից մեկը ձեռագրերի նկարագրության աշխատանքն է: Գ. Տեր-Վարդանյանի վկայակոչման համաձայն՝ արդեն հրատարակվել է հայերեն ձեռագրերի նկարագրության յոթ հատոր, ութերորդ հատորը հրատարակման փուլում է, իսկ իններորդը՝ խմբագրման եւ սրբագրման:

Առհասարակ պետք է նշել, որ Մատենադարանի՝ որպես գիտահետազոտական հաստատության, առաջնային խնդիրները մշտապես եղել են ին ձեռագրերի պահպանությունը, վերականգնումն ու պատճենահանումը, ձեռագիր հուշարձանների հավաքումը, հայերեն ձեռագրերի Մայր ցուցակի կազմումը, կրեւորագույն բնագրերի, ինչպես նաեւ հայկական մանրանկարչության հուշարձանների ուսումնասիրությունն ու հրապարակումը, համաշխարհային նշանակություն ունեցող միջնադարյան հայկական աղբյուրների օտար լեզուներով հրապարակումը եւ հայ ժողովրդի ստեղծած ձեռագրական մշակույթի պրոպագանդումն ու տարածումը:

Մատենադարանի գիտական գծով փոխտնօրեն Շուշանիկ Խաչիկյանը (Լ. Խաչիկյանի դուստրը) նշում է, որ իրենց հաստատության գիտական բոլոր ուղղությունները հանդիսանում են բազմաբնագավառ ուղիներ, եւ ավանդական գործառնություններից գատն՝ ավելացել են գերարդիական նշանակության գործունեության ուղիներ: Վերոնշյալներից է ձեռագրերի պահպանության գերարդիական համակարգը: Հատուկ նյու-



թերի օգնությամբ ձեռագրերն ախտահանվում են եւ անցնում բուժման լիակատար գործընթաց, ապա ամրացվում հատուկ տեխնոլոգիայով: Հատուկ պատրաստություն անցած շուրջ քսանհինգ մասնագետ հստակ տիրապետում է վերոնշյալ գործին: Բուժման եւ ախտահանման գործընթացում օգտագործվում են միջնադարյան բնագրերում հիշատակված բուժանյութերի դեղատոմսերը:

Շ. Խաչիկյանի հավաստիացմամբ՝ երիտասարդները սիրով են գալիս իրենց մոտ աշխատելու, եւ այսօրվա դրությամբ երի-

տասարդական զգալի ներուժ է գործում գիտահետազոտական տարբեր աշխատանքներում: Բացվել է նաեւ ասպիրանտուրային բաժին:

Հաջողությամբ ընթանում են ձեռագրերի թվայնացման աշխատանքները: Թվայնացման բաժինը համալրվել է նոր գերագոր տեխնիկական միջոցներով: Մատենադարանի կայքի «Թվային ռեսուրսներ» բաժնում արդեն հասանելի են ձեռագրերի Մայր ցուցակի՝ մինչեւ այժմ լույս տեսած բոլոր յոթ հատորների թվային տարբերակները:

Շարունակությունը՝ էջ 6



Սկիզբը՝ էջ 2

Հովսեփին տրվում էին մարգարեական երազներ. նա նաեւ ուներ մյուսների երազները մեկնելու շնորհ: Աստված սիրում էր Հովսեփին, լսում նրա աղոթքները, օգնում նրան, սակայն նա եւս հիմնականապես ուրեւ հատվածում չի հիշատակվում որպես մարգարե:

Մովսեսը Տիրոջ մարգարեներից էր, որն օծված էր նաեւ հրաշքներ գործելու կարողությամբ: Նրա միջոցով տրվեցին տասնաբանյա պատվիրանները:

Հազարամյակներ հետո հետաքրքրությամբ ենք կարդում մարգարեների կյանքի, կատարած հրաշքների, կրած հալածանքների ու նահատակության մասին: Նրանցից յուրաքանչյուրին վերաբերող սուրբգրային հատվածները պատմում են, թե ինչ փորձությունների միջով են անցել նրանք. մարդիկ կասկածանքով, արհամարհանքով էին վերաբերվում մարգարեներին, ծաղրում էին, հալածում, մեր-

ծում... Տիրոջ հանդեպ ունեցած անսահման հավատն ու անձնվիրումն էին ուժ տալիս նրանց, պահում, պահպանում:

Այսօր՝ ԻՎ դարում, ի հայտ են գալիս կեղծ մարգարե-մարգարեուհիներ, որոնք մեղանչելով Տիրոջ առջեւ, անտեսելով Նրա խոսքը՝ իրենց բարբաջանքն են տարածում սպասվող արհավիրքների, աշխարհի մոտալուտ վախճանի մասին: Իրենց Աստծո մարգարե համարող այս մոլորյալներն զբաղվում են հոգեոր-տությամբ, հետետորդներ փնտրելով: Նրանք իրականում հակադրվում են քրիստոնեական դավանաբանությանը, ժխտում են Սուրբ Երրորդության խորհուրդը, Քրիստոսի աստվածությունը, չեն ընդունում Եկեղեցու ծիսակարգը: Այս «մարգարեները» հիմնականում աղանդավորական այս կամ այն խմբավորման ներկայացուցիչ են, որ իրենց գործունեության համար պարարտ հող գտնելով՝ «կասկածելի» քարոզչություն են ծավալում: Նրանք սուտ

եւ այլաբանված «վկայություններով» խեղում են իրենց հետետորդների հոգեւոր նկարագիրը, ներաշխարհը, նրանց զգում կործանման որոգայթը:

Հին Կտակարանում շատ հատվածներ կան այն մասին, թե ինչպես են իրենց Աստծո մարգարեներ կայացնողները պատժվում. նրանց բաժին են ընկնում Տիրոջ ցասումն ու բարկությունը. այդ հատվածներից է Երեմիայի մարգարեության ԻԸ գլուխը, որը պատմում է Ամանիայի մասին: Ամանիան ներկայանում է իբրեւ Տիրոջ մարգարե, Նրա անուկից կեղծ վկայություններ տալիս եւ ահա խստագույնս պատժվում է. «Իսկ Երեմիա մարգարեն սասց Ամանիա մարգարեին. «Այժմ լսի՛ր, Ամանիա՛. Տերը քեզ չի ուղարկել, եւ դու իզուր փուչ բաների համար հույս տվիր այդ ժողովրդին: Դրա համար էլ Տերն այսպես է ասում. «Ահա եւ վռնդելու եմ քեզ երկրի երեսից: Այս տարվա մեջ իսկ պիտի մեռնես դու, որովհետեւ հակառակ բաներ խոսեցիր Տիրոջ անունից»: Եվ Ամանիա մարգարեն նույն այդ տարվա մեջ, յոթներորդ ամսին մեռավ» (Երեմ. ԻԸ 15-17):

Հիմնականապես մարգարեություններն իրականանում են Հիսուսի ծնունդով, իսկ Նրա խաչելությամբ եւ հարության իրենց լրումն են գտնում. այս մասին վկայում է հենց Ինքը՝ Փրկիչը. «Եվ տասներկուսին առանձին, մի կողմ տանելով՝ նրանց ասաց. «Ահավասիկ ելնում ենք դեպի Երուսաղեմ, եւ մարգարեների միջոցով մարդու Որդու մասին բոլոր գրվածները պիտի կատարվեն. ո-

ՈՂՈՐՄԻՐ ՆԱԵՎ ՄՈՒՈՐՅԱԼՆԵՐԻՆ...

րովհետեւ Նա պիտի մատնվի հեթանոսներին եւ պիտի ծաղրվի. Նրան պիտի ծաղկեն ու սպանեն, եւ երրորդ օրը հարություն պիտի առնի» (Ղուկ. ԺԸ 31-33): Պետք չէ հավատ ընծայել ինքնակոչ «մարգարեների» կեղծ խոսքերին, այլ՝ զգուշանալ նրանցից՝ հիշելով Պետրոս առաքյալի խոսքերը. «Եղան նաեւ սուտ մարգարեներ ժողովրդի մեջ, ինչպես որ այժմ էլ ձեր մեջ կարող են լինել սուտ ուսուցիչներ, որոնք, սպրդեցնելով, կորստաբեր հերձվածներ են ներմուծելու եւ, ուրանալով Տիրոջը, որ իրենց զնեց, իրենց վրա արագահաս կորուստ են բերելու: Եվ շատերը պիտի գնան նրանց աւանակությունների հետեւից. եւ այդ պատճառով ճշմարտության ճանապարհը պիտի անարգվի: Եվ ընչաքաղցությամբ, մտացածին խոսքերով ձեզ պիտի շահագործեն. բայց նրանց դատապարտությունը սկզբից հայտնի է, եւ նրանց կործանումը չպիտի ուշանա» (Բ Պետ. Բ 1-3):

Աղանդավորական տարբեր խմբավորումներ դիմում են այս զագրելի միջոցին՝ իրենց անդամներից մեկին կամ մի քանիսին ներկայացնելով իբրեւ Տիրոջ մարգարե: Իսկ հետո փորձում են համոզել, թե այդ մարդիկ Աստծուց զորություն են շնորհ են ստացել. կարող են բազմաթիվ լեզուներով խոսել, բժշկել, հրաշքներ գործել, իսկ վերջիններս՝ ինքնավստահ կեցվածքով, անամոթաբար պնդում են, թե երկնային Հայրը տեսիլներով կամ տարբեր եղանակներով իրենց է հաղորդում Իր կամքը, եւ իրենք միջնորդներ են Նրա եւ հա-

վատացյալների միջեւ... Հենց նրանց մասին է Աստվածաշնչում գրված. «...որովհետեւ սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարեներ պիտի ելնեն եւ նշաններ ու զարմանալի գործեր պիտի ցույց տան՝ մոլորեցնելու նպատակով, եթե հնար լինի, նույնիսկ ընտրյալներին» (Մարկ. ԺԳ 22):

Մի՞թե այսպիսիները չեն գիտակցում, որ ստում են, խաբում, մոլորեցնում, մեղանչում են Տիրոջ դեմ, անտեսում Նրա խոսքը... Ահա, դեռեւս հազարամյակներ առաջ Մատթեոս առաքյալն զգուշացնում է. «2գո՛ւյշ եղեք սուտ մարգարեներից, որոնք մուծնում են ձեզ ոչխարների զգեստներով, բայց ներսից հափշտակող գայլեր են: Իրենց գործերից՝ կճանաչեք նրանց. մի՞թե փշերից խողով են տատասկից թուզ կքաղե՞ն: Այսպես, ամեն բարի ծառ բարի պտուղ է տալիս, եւ չար ծառ չար պտուղ է տալիս...» (Մատթ. Է 15-17):

Արթուն լինենք, զգուշանալով մոլորեցնողներից, չընկնենք նրանց կործանարար թակարդը, ողջ հոգով եւ Եւթյամբ հավատանք եւ վստահենք միայն Տիրոջը. Նրան հետեւենք եւ ապավինենք, Նրա կամքն ու պատվիրանները կատարենք, Նրա խոսքը լսենք՝ մշտապես աղոթելով. «Մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն»:

Աղոթենք նաեւ մոլորյալների համար, որպեսզի նրանց հոգու աչքերը բացվեն, տեսնեն փրկարար լույսը, գտնեն առ Աստված տանող ճշմարիտ ուղին եւ այլեւս հոգիներ չկործանեն:


Արփինե ՀԱՆԹԻԿՅԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԳԻ ԳՈՅԱԴՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Ավելի քան քսան տարի է, ինչ Հայաստանը դարձել է ինքնիշխան պետություն: Թվում է, թե Հայաստանի անկախացումը պետք որ բացառապես դրականորեն անդրադառնար հայաստանցիների եւ մասնավորապես անկախության սերնդի հոգեւոր ներաշխարհի, բարոյահոգեբանական վիճակի վրա: Սակայն, ինչպես վկայում է մեզ շրջապատող իրականությունը, ամեն բան այնքան միանշանակ չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Ազատությունն ու անկախությունը, անշուշտ, մեծագույն շնորհներ են թե՛ առանձին վերցրած անհատի եւ թե՛ մի ամբողջ ազգի համար: Բայց եւ այնպես, անկախության հասնելուց հետո առաջանում է մի շատ եական հարց. ինչպե՞ս տնօրինել այդ անկախությունը, որպեսզի դա չվերածվի ամենաթողության եւ չարիքի: Սա մի լրջագույն հարց է, որը եւս չի կարող ունենալ միանշանակ պատասխան: Խորհրդային Միության յոթնամյա օրոքում գոյության ընթացքում հայ ժողովրդի մի քանի սերունդ դաստիարակվել ու կրթվել էր խորհրդային արժեհամակարգով, այն ժամանակների հատուկ բարոյական սկզբունքներով: Խորհրդային Միության փլուզման տարիներին միտում է դրսևորվում բնադատելու այն ամենը, ինչ կապված էր այդ պատմական ժամանակաշրջանի հետ: Զննադատվում էին սովետական բարոյական սկզբունքները, սովետական արժեքները, հոգեբանությունն ու հոգեկերտվածքը, մշակութային արժեքները եւ այլն: Այժմ հարց է առաջանում. որքանով էր նմանօրինակ վերաբերմունքը խորհրդային իրողությունների հանդեպ օբյեկտիվ եւ արդարացի: Հավանաբար ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ ցանկացած պետական ռեժիմ ունի թե՛ բացասական եւ թե՛ դրական կողմեր: Խորհրդային կարգերն այս առումով չէին կարող բացա-

ռություն լինել: Այդ ժամանակաշրջանի ամենաբացասական կողմերից էր, թերեւս, աթեիզմի բացահայտ քարոզը: Ասենք ավելին՝ աթեիզմը շատ հաճախ ուղակիորեն պարտադրում էր ողջ սովետական ժողովրդին: Ասել է թե՛ այդ տարիներին միլիոնավոր մարդիկ զրկված էին երկընտրանքի իրավունքից, հավատա՞լ Աստծո գոյությանը եւ առաջնորդվել Նրա պատվիրաններով, թե՞ լինել աթեիստ եւ ուղղորդվել այլ արժեքներով: Այլ արժեքներ ասելով՝ տվյալ դեպքում նկատի ունենք խորհրդային արժեքները, որոնք, ինչպես ցույց է տալիս վերջին քսաներեք տարիների դառն իրականությունը, այնքան էլ բացասական ու մերժելի չէին, ինչպես մեզ թվում էր Խորհրդային Միության վերջին տարիներին եւ Հայաստանի անկախության առաջին շրջանում: Հայաստանի անկախացումից հետո մեզ լիարժեք հնարավորություն ընձեռվեց դեմքով շրջվել դեպի Աստված եւ առաջնորդվել Նրա պատվիրաններով: Սակայն իրականությունն այն է, որ հայ ազգի մի մասը մտասեւեռվեց օտար արժեքների, մասնավորապես արեւմտյան արժեքների վրա, ինչը վերջին հաշվով ոչ մի դրական հետեւանք չի կարող ունենալ, մասնավորապես հայ ժողովրդի նման փոքրաթիվ ազգերի համար, որոնց առջեւ մշտապես ծառացած է գոյապահպանման խնդիրը: Ցանկացած ազգ, կորցնելով դարերի խորքից եկած իր արժեհամակարգը, բարքերն ու հոգեկերտվածքը, անխուսափելիորեն դադարում է գոյություն ունենալ իբրեւ առանձին էթնիկ հանրություն եւ հետզհետեւ վերածվում է որեւէ այլ մշակույթի բաղկացուցիչ մասնիկի: Եվ ահա այստեղ է օգնության հասնում

Հայ Առաքելական Եկեղեցին, որը կոչված է պարբերաբար հիշեցնելու մեր ժողովրդին իր հայ լինելու եւ հայ մտալու կարեւորության մասին: Նշենք, որ օտարամոլության արատավոր երեւույթը տասնամյակներ շարունակ բնորոշ է եղել մեր ազգին: Խորհրդային տարիներին եւ, ինչո՞ւ ոչ, նախախորհրդային ժամանակաշրջանում հայ ժողովուրդն իր հայացքն ուղղել էր դեպի Ռուսաստան, իսկ այժմ մեր ազգը միտում է դրսևորում կուրորեն յուրացնելու արեւմտյան արժեքները, որոնք, մեղմ ասած, բավականին տարբեր են բուն հայկական արժեքներից: Երբեմն այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ հայ ժողովուրդը բնավ չի հպարտանում իր հայ լինելով, ավելին՝ բարոյությամբ վրդովում է իր ազգային պատկանելության պատճառով: Արդյո՞ք համաշխարհային մասշտաբի հարյուրավոր կարկառուն մտավորականներ եւ հարուստ մշակութային ժառանգություն տված ազգն ունի բարոյական իրավունք՝ ունենալու նմանօրինակ վերաբերմունք սեփական մշակույթի հանդեպ: Անկասկած՝ ո՛չ: Ողջ խնդիրն այն է, որ մեր ազգի մեջ կան զգալի թվով մարդիկ, ովքեր տակավին անկարող են գիտակցել ազգային մշակույթի իրական մեծությունը, դրա պահպանման ու հետագա զարգացման կարեւորությունը: Հարց է առաջանում. ո՞րն է ելքը ներկայացված իրավիճակից: Թերեւս սխալված չենք լինի, եթե ասենք, որ ելքը լայնամասշտաբ լուսավորչական ու քարոզչական աշխատանքն է, որի ծանրության բեռը, անշուշտ, ընկած է հայ մտավորականության եւ, իհարկե, Հայ Առաքելական Եկեղեցու ուսերին: Կարելի է վստահաբար



ասել, որ մեր Եկեղեցին ու մտավորականությունը հանդիսանում են հայ ազգի գոյապահպանման երաշխավորները: Ստացվում է այնպես, որ եթե մենք մեր իսկ անխոհեմության պատճառով մի օր կորցնենք Մայր Եկեղեցին եւ հայ մտավորականությանը, մենք անխուսափելիորեն կորցնելու ենք ինքներս մեզ կամ այլ կերպ ասած՝ մեր ազգային ինքնությունը: Ասվածից հետեւություն, որ մեր ժամանակների համար առաջին հրամայականը պետք է լինի աչքի լույսի պես պահպանել Հայ Եկեղեցին եւ մեր մշակութային ընտրախափին: Հակառակ պարագայում հայությունը դատապարտված է ինքնաոչնչացման: Այժմ մեր ազգը կանգնած է լրջագույն երկընտրանքի առջեւ: Եթե մեր ժողովրդի մեծ մասն իրոք իմաստուն է ու հեռատես, նա կընտրի ազգայինը պահպանելու ուղին, այլապես հայերի անունը կպահպանվի սոսկ պատմության դասագրքերում: Համաշխարհային պատմության մեջ եղել են մի շարք

ազգեր, որոնք բավականին առաջադեմ ու քաղաքակիրթ են եղել, աշխարհին հարուստ մշակութային ժառանգություն են թողել, բայց ներկայումս նրանք չունեն ո՛չ հայրենիք, եւ ո՛չ էլ ազգային հիշողություն: Յավալի կլինի, եթե հայ ազգը լրացնի անհետացած ազգերի այդ ցանկը, բայց քանի դեռ գոյություն ունի հայոց անկախ պետությունը, տակավին մի փոքր հույս կա, որ ամեն բան այնքան անհուսալի չէ, ինչպես կարող է թվալ հոռետեսներին: Եվ հենց այս ճակատագրական պահին է, որ հայ ժողովուրդը պիտի ապացուցի իր դարավոր իմաստությունն ու հարատեւելու կամքը: Հայ ժողովրդի գոյապահպանման հիմնախնդրի համատեքստում հարկ է մի փոքր անդրադարձ կատարել ժամանակակից հայ երիտասարդությանը (թե՛ հայաստանցի եւ թե՛ սփյուռքահայ) եւ նրա ազգային ու քրիստոնեական դաստիարակության խնդրին:

Շարունակությունը՝ էջ 8



Եղիշե Չարենց

Սկիզբը՝ էջ 3

Խնդիր է դրվում ստեղծելու գրական նոր ձեւեր ու տեսակներ: Փոխվում են պոեզիայի կշռույթը, պատկերային համակարգը, ինչուսական կազմն ավելի հարմարեցվում է լսողականին, արտասանականին: Իշխող է դառնում «բառ բոմբի» գեղագիտությունը: Մի կողմից ապագայապաշտական ձեւերի, մյուս կողմից պրոլետարական բուն պահանջների միջեւ խոսքի բովանդակային միջուկից անհայտանում է այն ամենը, ինչը կոչվում է հայ եւ Հայաստան: Նրանց համար ամենից կարեւորը «ներքին բովանդակությունն էր՝ իդեոլոգիան» (Ա. Վշտունի, «Մի գրախոսականի առթիվ», ԽՀ, 1923, թիվ 104, 18 մայիս): Մինչ այդ «Ե. Չարենցի քնարերգությունը» հոդվածում Սուրխաթյանը մեղադրում էր նրան՝ թե «անկարող է եղել հեռու մնալ [հայ գրականության] տիրող ազդեցությունից» (ՄՀ, 1921, թիվ 5, 8 մայիս): Իսկ

ՀԱՅՐԵՆԱԴԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ

տիրող ազդեցությունն ազգային ոգին էր: Արդեն «Պոեզոգուռնա» ժողովածուի գրախոսականի մեջ ավելացնում է. «Չի կարելի մոտենալ նրան հին չափանիշներով» եւ ճշգրտում. «Չարենցի ստեղծագործության օբյեկտը նախ իր հեղաշրջված երկիրն է՝ տեղային վերածնվող երկիրը, երկրորդ՝ հեղափոխական մասսան <...>, երրորդ՝ Էլեկտրոներկայան իրականություն բերող պրոլետարական ավանգարդն է» («Մարտակոչ», պատկերազարդ հավելված, 1923, թիվ 1):

Վշտունի «Աշխատավորական պոեզիա» հոդվածում, անմիջապես 3-ի դեկլարացիայից առաջ, կոչ է անում երգել ոչ թե հայրենիք, այլ աշխատանք, ծխելույզ, գործարան (ՄՀ, 1922, թիվ 103, 12 մայիս): Իսկ նախկին հայրենասիրական բանաստեղծությունների համար քննադատվելու վտանգ էր գգում: Նույն հոդվածում կոչ է անում ճանաչել «երկաթի եւ շոգու» մեջ եղած «արժեքավոր գանձերը» եւ ապագա գրականության դեկլարատիվ լուսնոգ էր գգում: Այս կարգի պոեզիայի նմուշ է դառնում նրա «Շոգեկառք»-ը: Մահարին, իր հերթին, երգը նմանեցնում է բեկվախի, որպեսզի «Ձեր գանգը հրդեհով կիզի» («Մայիսի մեկը»):

Լույս են տեսնում «Երեքի» գրական «Բյուլետեն»-ները: Առաջին համարում (8 հուլիս, 1922, Երեւան) գետեղված են Վշտունու «Ձանգ», «Փողոցներ», «Շոգեկառք», Աբովի «Մարտնչումի ժամին», «Նախօրյակին» եւ Չարենցի «Ձեզ» բանաստեղծությունները: Այստեղ եւ նոր բո-

վանդակությունն էր, եւ նոր ձեւը՝ պատկերը, ոճը, կշռույթը, խոսքի գրաֆիկան... Ամեն ինչ կար, բայց չկար ո՛չ իրական հայրենիքի գեղարվեստը, ո՛չ հոգեւոր Հայաստանի...

Կուսակցական մամուլ, առաջին համարներից սկսած, ուղղորդում էր նոր գրականությունը՝ «անհատական գեղարվեստին» հակադրելով «համայնական գեղարվեստը», ինչին պետք է մասնակից լինի «ժողովրդական մասսան» («Գեղարվեստը պրոլետարական պետության մեջ», ՄՀ, 1921, թիվ 20, 24 մարտ), «գրչի մշակները պիտի մոտեն համամարդկային շարժման հունի մեջ» (Յ. Սուրխաթյան, «Հայ գրչի մշակները», ՄՀ, 1921, թիվ 14, 16 մարտ): Պահանջ էր՝ «առաջ քաշել աշխատավորական խավերից դուրս եկած գրողներին եւ գեղարվեստագետներին» («Մուրճ», 1922, թիվ 1, էջ 1): Ըստ Անդրեյ Պլատոնովի «Պրոլետարական պոեզիա» հոդվածի՝ յուրաքանչյուր մի նոր մեքենա մի նոր պոեմ է, Էլեկտրաֆիկացիան պրոլետարական առաջին վեպն է» (նույն տեղը, էջ 25):

Թեւեւ անցյալի սովորույթով լինում էին անդրադարձներ հայ կյանքին, ինչպես Վ. Թոթովենցի «Հայ կյանքը գաղութներում» («Նորք», 1922, թիվ 1), Դավիթ Անանուի «Ռուսահայերի հայկական պատգամը 1870-1900» («Էքմիածին», 1922), Կոստան Չարյանի հոդվածները՝ նվիրված Ա. Չոպանյանի կազմած «Վարդաստան» ժողովածուին («Նորք» (1924, թիվ 4), Մարտիրոս Սարյանի արվեստին («Պայքար»,

1923, թիվ 10-11), Չապել Եսայանի «Գաղութահայ գրականությունը» («Նորք», 1927, թիվ 1), բայց այլեւս դրանց ժամանակը չէր: Նույնն էր Ռուսաստանում, որտեղ Ս. Եսենկին էր վիճակված սոսկ իր երկրին «ալելու երգել» («Զառասույթ», հայերեն թարգմանությունը՝ Ե. Չարենցի, «Նորք», 1926, թիվ 1, էջ 70-72, տե՛ս նաեւ Ե. Չարենց, Խ. 3, էջ 261-264, 365):


Պրոլետգրողներն այնքան էին լկտիացել, որ իրենց գերազանց էին համարում Դանտեից, Շեքսպիրից. Բեթհովենից: Այդպես անհարիր անունները դրվում են իրար կողքի՝ «Հակոբ Հակոբյանը եւ Շեքսպիրը» (Ա. Կարինյան, ՄՀ, 1924, թիվ 231, 8 հոկտեմբեր): Միմյուսին Հակոբյանը նպաստում է Էլ ավելի խորացնելու պրոլետգրողների տգիտությունը. «Պրոլետարական գեղագետը իր գիտությունը գրքից չպետք է սովորի, այլ մասսայից, կոլեկտիվից» («Գեղարվեստը եւ պրոլետարիատը», ՄՀ, 1924, թիվ 241, 19 հոկտեմբեր): «Մասսան»՝ անգրագետ, «կոլեկտիվը»՝ անգետ, պրոլետարիատը՝ տգետ, այդ իսկ պատճառով, ըստ Վշտունու, «Սեղմել պրոլետգրողին <...> ազգային սահմաններից ներս, նշանակում է արջի ծառայություն մատուցել հենց այդ գեղարվեստագետին: Մենք չենք ժխտում տեղական պայմանների հարազատ կոլորիտը <...>, սակայն դա նպատակ չէ, այլ միջոց: Պրոլետգրականությունը գնում է ոչ թե ազգային սահմաններից ներս, այլ <...> դեպի ինտերնացիոնալիզմ: <...> Անցել է Բաֆֆիների, Գամառ Զաթիպաների եւ, եթե կուզեք, Թումանյանների գրական շրջանը - ազգային գրականության շրջանը» (ՄՀ, 1924, թիվ 241, 19 հոկտեմբեր):

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Տայ ձեռագիր մատենագրության մեջ հաճախ կարելի է հանդիպել գրչուհիների անունների, որոնք հիմնականում կապվում են Շենհերի, Շոռոթի, Չալիծորի կուսանոցների հետ: Սակայն 17-րդ դարի Սյունիքի այս կուսանոցները միակը չեն, որտեղ ծաղկել է գրչության արվեստը: Այն խորթ չի եղել նաեւ Նոր Ջուղայի Սբ Կատարինէ կուսանոցի միանձնուհիներին: Այս կուսանոցում պահվել են ոչ միայն հնագույն ձեռագրեր, այլև ստեղծվել են ծիսական ու կրոնական բնույթի գրչագիր Նոր մատյաններ:



Կուսանոցի գրչուհիներից, թերեւս, առավել արգասաբերը Սառա անունով գրչուհին է: Նրա գրչին են պատկանում մի քանի ձեռագիր՝ «Ժողովածոյ» (1669 թ.), «Քարոզգիրք» (1670 թ.), «Ճառքնսիր» (1671 թ.):

Գրչուհին, ով խոնարհաբար իրեն կոչում է «եղվելի գրիչ», «անարժան գրչակ», «մեղապարտ գրիչ», «մեղավոր գծողակ» եւ այլն, ձեռագրերի հիշատակարաններում չափազանց աղքատիկ տեղեկություններ է թողել իր մասին:

Ինչպես ինքն է նշում 1671 թ. ընդօրինակած «Ճառքնսիր»-ի հիշատակարանում, բնիկ դաշտեցի է: «Աւարտ եղել շնորհին Զրիստոսի, ձեռամբ ի Սառա անունամբ կրօնաւորի, որ է բնիկ ինքն Դաշտցի...», իր մասին գրում է ձեռագրի հեղինակը: Այսօր մեզ հայտնի համանուն մի քանի բնակավայրերից հատկապես որն է եղել նրա ծննդավայրը:

բարեկենդան ուրբաթ օր սրբազան եւ սրբակրան ընտիր կուս Սառէն առ Աստուած փոխվեցաւ. Աստուած զինքն ընդ իմաստուն կուսանս դասեցե, ամէն. լուս ի շաբաթ թաղում եղաւ»:

Գրչուհին իր թողած հիշատակարաններում հաճախ է հիշում նաեւ հեռու եւ մոտ մերձավորներին՝ «ծնողացն իւրոց Գեորգին, Գօզալին եւ եղբօրն Դուկասին ու քերթացն Դշխուհին, Անաէ» եւ այլոց:

Կարելի է ենթադրել նաեւ, թե ովքեր են եղել գրչուհու ուսուցիչները: 1669 թ. ընդօրինակած «Ժողովածոյ»-ի հիշատակարանում կույս Սառան խնդրում է հիշել իր վարպետին՝ «հոգեւոր ծնօղ եւ վարպետն իմ զսրբասնեալ ճգնաւոր տեր Մարտիրոսն»: 1670 թ. Նոր Ջուղայում ընդօրինակած «Քարոզգրքի» հիշատակարաններից մեկում էլ գրչուհին խնդրում է ողորմի տալ «հոգեւոր քոյր Սանդուխտին, որ օրինակն նա պարգեւեաց մեզ, եւ ինքն Նոյն ամին փոխեցաւ առ Զրիստոս»:

Սառան իրեն մահտեսի չի կոչում: Սակայն վերոհիշյալ «Քարոզգրք»-ում խնդրում է հիշել իր հոգեւոր մայր եւ քոյր Սափուրին, որը երկու անգամ իրեն Երուսաղեմ է տարել: «Դարձեալ աղաչեմ զձեզ յիշեցեք զանարժան գրիչ Սառայս, եւ զհոգեւոր մայր եւ քոյրն իմ Սափուրն, որ եւ Զրիստոս զինքն ընդ Սուրբ Իւղաբեր Կանայսն դասեցե, զի շատ երախտաւոր է ինձ. որ Բանգամ եբեր զիս Երուսաղեմ... Զրիստոս իւրն վարձահատոյց լինի ամէն»:

Երուսաղեմում նրա գտնվելու ժամանակը հայտնի չէ, եւ, չունենալով ձեռագրերը համեմատելու հնարավորություն, դժվար է ասել, թե արդյո՞ք 1648 թ. Երուսաղեմում ընդօրինակված եւ Նոր Ջուղայում պահվող «Ժողովածո»-ն:



ծոյ»-ի գրչուհին Նույն Սառա՞ն է, թե՞ իր անվանակիցը, ով իր մասին ասում է՝ «զետիկս ի գրչաց եւ զառաջինս ի մեղաւորաց, ուտից հող եւ մոխիր սուտանուն Սառայս, որ միայն զանունս ունիմ եւ ոչ զգործ...» եւ ապա խնդրում. «Ոհ, Ոհ աղաչեմ զձեզ ողորմելի աղային Սառայս վասն Աստուծոյ սիրոյն, յորժամ ջերմեռանդ սիրով աղօթեք, յիշեցեք... ինձ եւ ծնողացն իմոց, եւ Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալուստն»:

Իսկ ահա Երուսաղեմի ձեռագրատանը պահվող ձեռագրերից մեկը՝ 1669 թ. Սբ Կատարինէ վանքում ընդօրինակված մեկ այլ «Ժողովածոյ»-ն, կրկին հի-

շեցնում է մեզ հայտնի գրչուհի կույսին. ձեռագրի գրիչներն են Սառա միայնակյացն ու Ոսկան Դպիրը, ստացողը՝ Նույն Սառան:

Գրչուհու ընդօրինակած ձեռագրերում հատկապես ուշագրավ են կուսանոցի մասին գրա-

ռումները: Այս առումով առավել հետաքրքրություն է ներկայացնում վերը նշված «Ճառքնսիր»-ի հիշատակարանը, որտեղ տեղեկություններ են հաղորդվում կուսանոցի միանձնուհիների քանակի, նրանց աղոթական կյանքի եւ Պարսկաստանում կրած դժվարությունների մասին: Գրչուհին, նշում է, թե կուսանոցի 30 կույսերը գիշերուզօր աղոթք են անում աշխարհի համար՝ միաժամանակ դժվարությամբ հայթայթելով թագավորական հարկը, որ կուսանոցի համար ավելին է, քան մյուս հայկական եկեղեցիների համար սահմանվածը:

Շարունակությունը՝ էջ 7

ՉԱՅ ՄՏՔԻ ԵՎ ՈԳՈՒ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ Դարանի դեմ՝ Մատենադարան

Սկիզբը՝ էջ 4

Թվային տարբերակով արդեն հասանելի է Սիմեոն Լեհացու «Ուղեգրության» միակ ձեռագիր օրինակը, որը պահվում է Վարշավայի Ազգային գրադարանում:

Այժմ ընթերցողներին տրամադրվում են ձեռագրերի թվայնացված տարբերակները, որը զգալիորեն հեշտ ու ոյուրին է դարձնում կատարվող աշխատանքը:

Տեխնիկական արդիական միջոցներով հրաշալիորեն վերագինվել է ձեռագրերի վերականգնման բաժինը, որտեղ աշխատող մասնագետներն ունեն միջազգային մակարդակի փորձառություն: Հիմնադրման օրվանից մինչ այսօր Մատենադարանում գիտական բեղմնավոր գործունեություն են ծավալել բազմաթիվ նշանավոր գիտնականներ, բանասերներ, պատմաբաններ, լեզվաբաններ: Վաստակաշատներից է Անահիտ Աստուխյանը, ով գիտական մշակման եւ թվայնացման բաժնի ավագ գիտաշխատող է: Նա մի շարք արժեքավոր աշխատությունների հեղինակ է, այժմ ուսումնասիրում է

սիյուռքահայ անվանի պատմաբան Արշակ Ալպոյաճյանի մեծահարուստ արխիվը: Նա Պոլսո պատրիարք Մեսրոպ Մուրաֆյանի հրավերով հինգ տարի աշխատել է պատրիարքարանի գրադարանում, գիտական սկզբունքներով այն կարգի բերել:

Մատենադարանը 1941 թվականից հրատարակում է իր գիտական հանդեսը՝ «Բանբեր Մատենադարանի»: Ամեն տարի այդ հանդեսում հրատարակվում են ուշագրավ հայագիտական հետազոտություններ: Հայոց Մատենադարանը վաղուց ի վեր սերտ կապերի մեջ է ձեռագրական մշակույթի խնդիրներով զբաղվող արտասահմանյան գիտական եւ թանգարանային համաման հաստատությունների հետ, կատարում է մշակութային զանազան մասունքների, գրքերի եւ մանրանկարների փոխանակում:

Մատենադարանը հանդես է գալիս որպես խոշոր գիտաժողովների կազմակերպիչ եւ մասնակից:

Այստեղ հրաշալիորեն կահավորված եւ էլեկտրոնային արդիական միջոցներով սարքավորված դահլիճներում տեղի են ու-



նենում ամենամյա գիտաժողովներ, սեմինարներ եւ խորհրդակցություններ: Սերտ կապերով եւ աղերսներով համագործակցելով աշխարհում հայտնի համաման գիտական կենտրոնների հետ՝ Մատենադարանն ԱՊՀ-ում ձեռք է բերել գիտական բազային կենտրոնի կարգավիճակ: 2014 թ. աշնանը Մատենադարանում նախատեսված է միջազգային լայն հնչեղության գիտաժողովի անցկացում, որի նախապատրաստական աշխատանքներն արդեն սկսված են:

Բազմաթիվ օտարազգի նշանավոր գործիչներ, գրողներ, գիտնականներ, դիվանագետներ, պետական բարձր պաշտոնյաներ հիացմունքով են արտահայտվել Մատենադարանում պահվող մշակութային եզակի արժեքների վերաբերյալ: Նրանցից, օրինակ, ֆրանսիացի հայտնի գրող Հանրի Բարբյուսը հետեւյալն է նշել. «Մատենադարանը հարստացրեց իմ միտքը: Ես երջանիկ եմ»: Ակադեմիկոս Տառլեն գրել է. «Հայաստանի Մատենադարանը անշնչելի

տպավորություն է թողնում: Կանգնած ես ամենակուլտուրական պատմական մի ժողովրդի հանդիման, որը դասական հնարարից ընդհուպ մինչեւ ներկա ժամանակներս համարվել եւ համարվում է կուլտուրական ազգերի առաջնեկներից»: ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Ի. Կասիցանը եւ արվեստի վաստակավոր գործիչ Մ. Խմելկոն անթաքույց հպարտությամբ արձանագրել են. «Այստեղ ապրում է հայ ժողովրդի մեծ մշակույթը. որը 1500 տարի ի վեր պահպանում է իր գեղարվեստական հմայքը եւ գերում մեզ շքեղ գեղագրությամբ, գույների ուժով ու թարմությամբ եւ գիրք կազմելու վարպետությամբ: Կեցցե այն ժողովուրդը, որը պահպանել է այսպիսի արժեքներ»:

Այսօր եւս Մատենադարանն ամեն օր շարունակում է ավելացնել, բազմապատկել հայ ժողովրդի, հայկական մշակույթի շերտ ու անկեղծ նվիրյալների թիվն ամբողջ աշխարհում:

Երիցս իրավացի է Մատենադարանի տնօրեն Հր. Թամրազյանը, երբ հպարտությամբ շեշտադրում է, որ Մատենադարանը մեր ինքնությունն է, դրոշն է, գիտանշանն է:

Այն, հիրավի, մի օրհներգ է, որ հնչում է հավերժորեն:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Բ. Ի. ՊԼԱՏՅՈՎ

ՎՆԻՐՎԱ ՏՆՏԵՍԻ ՎՌՎԿԸ

Սկիզբը՝ թիվ 4-6, 8-10, 12, 14

Հիսուս Զրիստոսը, ավարտելով առակի պատմությունն այն մասին, թե ինչպես կալվածատերը գովեց իր տնտեսին, որին անիրավ էր համարում, հավելում է. «Քանի որ այս աշխարհի որդիներն ավելի հնարամիտ են, քան լույսի որդիներն իրենց սերնդի մեջ» (Ղուկ. Ի2 8):

Ի՞նչ էր Տերն ուզում սրանով ասել:

Ընդունելով պրոֆեսոր Բուսկելիչի սքանչելի բացատրությունը՝ պետք է խոստովանել, որ Տերը, «այս աշխարհի որդիներ» ասելով, ի նկատի ուներ մեղավորներին, որոնք հոգ են տանում միայն իրենց երկրային բարեկեցության մասին, իսկ «լույսի որդիներն իրենց սերնդի մեջ»՝ փարիսեցիներին ու օրենսգետներին, որոնց մեկ անգամ չէ, որ անվանեց «կույր առաջնորդներ»:

Ուստի Փրկչի միտքը, որքանով այն կարող է մեզ հասնել լինել, կարելի է արտահայտել այսպես. անիրավ տնտեսը, որ մեղավոր մարդ էր, զոչաց ու հաշտվեց այն մարդկանց հետ, որոնց նեղացրել էր, ինչի համար էլ արժանացավ իր տիրոջ գովեստին: Իսկ փարիսեցիներն ու օրենսգետները՝ ժողովրդի այդ կույր առաջնորդները, որոնք իրենց արդարներ էին համարում, չեն ցանկանում ապաշխարել: Ուստի այնպիսի մեղավորները, ինչպիսին անիրավ տնտեսն է, աշխարհի որդիներն են. դրսևորում են ողջախոհություն, իմաստուն են փարիսեցիներից եւ օրենսգետներից, այն է՝ լույսի որդիներից իրենց սերնդի մեջ, ավելի հնարամիտ են: Թիչ ավելի ուշ՝ Երուսաղեմի տաճարի վերջին այցի ժամանակ, դիմելով փարիսեցիներին ու օրենսգետներին, Տերը նույն միտքն արտահայտեց՝ ներքոհիշյալ առակով: «Մի մարդ երկու որդի ուներ: Առաջինին մոտենալով՝

նա ասաց. «Որդյա՛կ, զնա՛ այսօր աշխատի՛ր այգում»: Սա պատասխանեց ու ասաց. «Գնում եմ, տե՛ր» ու չգնաց: Մոտեցավ մյուսին էլ եւ նույնն ասաց: Սա պատասխանեց ու ասաց. «Չեմ ուզում: Բայց հետո զոչաց ու զնաց այգին»: Պատմելով այս առակը՝ Տերը հարցրեց փարիսեցիներին ու օրենսգետներին. «Երկուսից ո՞ր մեկը կատարեց հոր կամքը»: Նրանք պատասխանեցին՝ երկրորդը: Այդ ժամանակ Հիսուսն ասաց նրանց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մաքսավորներն ու պոռնիկները ձեզանից առաջ պիտի հասնեն արքայություն» (Մատթ. ԻՎ 28-31):

Այո՛, մաքսավորները եւ ընդհանրապես մեղավորները, որոնք ժամանակին հրաժարվել են Աստծո կամքը կատարելուց եւ իրենց արդարներ չեն համարում, կարող են դեռուս խելքի գալ, զոչալ եւ շարունակել իրենց կյանքն այնպես, ինչպես Տերն է պատվիրել. եւ նրանցից, ով առաջինն է կատարում այդ փրկչական քայլը, անտարակույս նա էլ ողջախոհության համար արժանանում է գովեստի: Սակայն մեղավորների մեջ քիչ չեն նաեւ այնպիսիները, որոնք իրենց համարում են արդար, այսինքն՝ լույսի որդիներ՝ իրենց սերնդի մեջ:

Իրենց երեւակայական արդարությամբ կուրացած՝ նրանք չեն տեսնում, չեն նկատում իրենց մեղքերը եւ այդ պատճառով էլ զոչալն ավելորդ են համարում, եւ Աստծո այգում աշխատելը նրանց համար միանգամայն անօգուտ է: Իսկ ի՞նչ է ստացվում. իրենց մեղքը գիտակցող եւ փրկության ուղին բռնած մեղավորները հեռու են գնում կարծեցյալ արդարներից, որոնք դուրս են եկել տեղում եւ ոչ մի քայլ չեն անում. այո՛, այս աշխարհի որդիներն ավելի հնարամիտ են (ողջախոհ, իմաստուն), քան լույսի որդիներն իրենց սերնդի մեջ:

Շարունակելով անիրավ տնտեսի մասին առակը՝ Զրիստոսն իրեն շրջապատող մաքսավորներին ու մեղավորներին ասաց. «Եվ ես ձեզ ասում եմ. անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք, որպեսզի, երբ այն պակասի, հավիտենական հարկերի տակ ընդունեն ձեզ» (Ղուկ. Ի2 9):

Այս խոսքերով Տերը, անկասկած, պատասխան տվեց իր կողքին գտնվող մաքսավորների ու մեղավորների այն հարցերին, որոնք ներկա պահին մտահոգում էին նրանց: Հետեւելով Փրկչին, Ով բոլորին ապաշխարության երկանչում, եւ իրենց Նրա աշակերտները համարող մաքսավորներն ու մեղավորները արդեն գիտակցեցին, որ իրենց մեղքերը չեն լուրջացրել, որոնք նեղացրել էր նրանց սկսեցին արդարներից հեռանալ, որոնք նեղացրել էր նրանց սկսեցին արդարներից հեռանալ, որոնք նեղացրել էր նրանց սկսեցին արդարներից հեռանալ, որոնք նեղացրել էր նրանց սկսեցին արդարներից հեռանալ:

Ահա այս հարցերին է պատասխան տալիս Տերը:

Ինչի՞ց սկսել: Սկսեք նրանից, ինչից սկսեց անիրավ տնտեսը. առաջին հերթին հաշտվեք նրանց հետ, որոնց նեղացրել էք. վերադարձրեք նրանց այն ամենը, ինչն անարդարորեն ստացել էք նրանցից, օգտագործեք այդ անիրավ հարստությունը որպես նրանց հետ հաշտության միջոց եւ դուք այդ անիրավ մամոնայով նրանց որպես բարեկամներ կունենաք, եւ նրանք կադրթեն Աստծուն, որ ձեզ ների:

Իսկ որպեսզի նրանք հավիտենական հարկերի տակ ընդունեն ձեզ խոսքերը չի կարելի տառաջիորդեն հասկանալ, քանի որ բոլորին էլ հայտնի է, որ միայն Աստված է իրավասու իր երկնային Թագավորության մեջ ընդունելու որեւէ մեկի, իսկ որ Տերն օգտագործեց նման արտահայտություն, ապա պետք է այն որպես փոխաբերություն ընդունել, ինչը հաճախ ենք կիրառում խոսակցության ժամանակ:

Օրենքի ճշմարիտ ուսուցման մասին իր քարոզում Զրիստոսն ասաց. «Եթե սեղանի վրա քո ընծան մատուցելու լինես եւ այնտեղ հիշես, թե քո եղբայրը քո դեմ մի ոխ ունի, քո ընծան թող սեղանի առաջ եւ զնա՛ նախ հաշտվի՛ր քո եղբոր հետ եւ ապա ե՛կ քո ընծան մատուցի՛ր» (Մատթ. Ե 23-24): Զրիստոսը խոսեց զոհասեղանի եւ զոհաբերության մասին նրա համար, որ իր ժամանակի հրեաները, մեղքերը զոչալիս եւ Աստծուց ներում խնդրելիս, ըստ մովսիսական օրենքի, մշտապես զոհ էին մատուցում: Ըստ Եղեքյան՝ խոսքն այստեղ մեղավորի աղոթքի մասին է, որով նա խնդրում է Աստծուն՝ իր մեղքերը ներելու ակնկալիքով: Եվ ահա մեղավոր մեկին Տերն ասում է, որ մինչեւ իրենից ներում խնդրել՝ զնա եւ հաշտվի եղբայրների հետ, որոնց նեղացրել է: Տա նրանց այն ամենը, ինչն անիրավ կերպով է ստացել նրանցից:

Շարունակելով իր հորդորները մաքսավորներին ու մեղավորներին՝ Տերն ասաց (դուք գիտեք այս ասացվածքը). «Թիչ բանի մեջ հավատարիմը շատի մեջ էլ հավատարիմ է, իսկ քիչ մեջ անիրավը շատի մեջ էլ անիրավ է» (Ղուկ. Ի2 10): Դուք գիտեք, որ չի կարելի մեծ գործ վստահել մեկին, ով փոքրի մեջ անիրավ ու անազնիվ գտնվեց: Դուք փնտրում եք ձեր հոգու փրկությունը, դուք ուզում եք մեծը ստանալ, ուստի հավատարիմ եղեք փոքրի մեջ, հավատարիմ եղեք այն անիրավ հարստությանը, որը տնօրինում եք: Տնօրինեք այն իմ ցուցումով եւ այդ ժամ միայն կարող եք հուսալ, որ ինձանից կստանաք ճշմարիտ հարստությունը՝ հավիտենական կյանքի երանությունը: Իսկ եթե պարզվի, որ դուք անիրավ մամոնայի մեջ հավատարիմ չեղաք, այդ դեպքում ձեզ ո՞վ կկատահի ճշմարիտը:

Շարունակելով

Թարգմանությունը՝
Ա. ՄՍԿՄԵՐԸՅԱՆԻ

ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԳԻ ԳՈՅԱԴՊԱՅՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Սկիզբը՝ էջ 5

Բանն այն է, որ ցանկացած հասարակության ու ժողովրդի ապագան ուղղակիորեն կապված է երիտասարդ սերնդի, նրա բարոյահոգեբանական վիճակի հետ: Նախ եւ առաջ նշենք, որ բոլոր ժամանակներում եւ այժմ էլ ավագ սերունդը հակված է քննադատելու, եթե չասենք դատափետելու երիտասարդությանը՝ նրա ապագային կեցվածքի ու պահվածքի, ինչպես նաեւ քրիստոնեության սկզբունքներից շեղվելու համար: Հավանաբար սխալված չենք լինի, եթե ենթադրենք, որ երիտասարդ սերունդն ի սկզբանե չի կարող լինել լավը կամ վատը: Երիտասարդությունը ճիշտ այնպիսին է, ինչպիսին նրան դարձնում է ավագ սերունդը եւ, իհարկե, պետությունը՝ իր ճիշտ կամ սխալ կրթական քաղաքականությամբ: Այսինքն՝ եթե նույնիսկ արդի երիտասարդությունը ճշմարիտ քրիստոնյային ու հային անհարիր պահվածք է դրսևորում, ապա մեղքի մեծ մասն իրականում ընկած է միջավայրի վրա, որը հոգեբանորեն եւ բարոյապես խեղում է մատաղ սերնդին՝ դարձնելով նրան անպիտան տվյալ հասարակության, իսկ ավելի լայն առումով՝ մարդկության համար: Չափազանց հեշտ է դեռուս չձեւավորված երիտասարդներին շեղել ճշմարիտ ուղուց եւ չափազանց բարդ է այդ նույն երիտասարդներին վերադարձնել դեպի ճշմարիտ ուղի: Ասել է թե՛ որքան շուտ ավագ սերունդն է պետությունը հասկանան իրենց իսկ սխալները, այնքան ավելի մեծ կլինի հավանականությունը, որ ապագա սերունդները ձեւավորվեն իբրեւ ճշմարիտ հայ-քրիստոնյաներ: Ստեղծված իրավիճակում ելքը պետական վերնախավի, Հայոց Եկեղեցու եւ հասարակության առավել գիտակից հատվածի փոխհամաձայնեցված գործողությունների մեջ է: Թերեւս պարզից էլ պարզ է, որ առանձին վերցրած Հայ Առաքելական Եկեղեցին, հայ հասարակությունը եւ պետական վերնախավը ի գործու չեն գատ-գատ արդյունավետորեն լուծելու մատաղ սերնդի ճշմարիտ բարոյական դաստիարակության խնդիրը, քանի որ



վերջինս իր բնույթով համազգային է ու համապետական, ուստի պետք է լուծվի բացառապես ընդհանուր ջանքերով: Իսկ ի՞նչ կարող ենք ասել սփյուռքահայ երիտասարդության ազգային եւ հոգեւոր դաստիարակության մասին: Տվյալ դեպքում խնդիրն ավելի բարդ է, քան արեւելահայության պարագայում է: Եթե հայաստանցիները, ապրելով իրենց հարազատ երկրում ու հարազատ միջավայրում, հետզհետե կորցնում են իրենց ազգային դիմագիծը, ապա ի՞նչ կարելի է ասել սփյուռքահայերի ու, մասնավորապես, սփյուռքահայ երիտասարդության մասին, որն առհասարակ Հայաստան չի տեսել եւ մեծ հաշվով կտրված է հայկական միջավայրից: Նման պայմաններում ուժացման գործընթացն ակնհայտորեն մի քանի անգամ արագ է ընթանում: Այս առումով սփյուռքահայ երիտասարդությունը, անկասկած, ավելի խոցելի է, քան Հայաստանի երիտասարդները: Ու քանի որ Սփյուռքում օբյեկտիվորեն գոյություն ունի հայոց պետականություն, սփյուռքահայ երիտասարդության հայեցի դաստիարակության ողջ բեռը մնում է հայ համայնքների եւ կրկին Հայ Առաքելական Եկեղեցու ուսերին: Ինչպես տեսնում ենք, Հայոց Եկեղեցուն վիճակված է հավերժապես լինել իր ազգի կողքին, մշտապես կիսել նրա տարաբնույթ հոգսերն ու խնդիրները, որոնցից ամենալուրջը, ըստ երեւույթի, գոյապայքարի ու գոյապահպանման հիմնախնդիրներն են: Ակնհայտ է, որ Հայ

Առաքելական Եկեղեցին իր ուժերի ներածի չափով կատարում է իր գործառնությունը. խոսքը եկեղեցական կրթօջախների ստեղծման եւ լայնամասշտաբ քարոզչության իրականացման մասին է: Բայց եւ այնպես որքան էլ ազդեցիկ ու գորավոր լինի Մայր Եկեղեցին, այն չի կարող եւ չպետք է իր վրա վերցնի յուրաքանչյուր հայի բարոյական պարտավորությունները: Խոսքը տվյալ դեպքում վերաբերում է հայ երիտասարդների պատշաճ ազգային կրթությանն ու դաստիարակությանը. այս լրջագույն գործում իր լուրման պետք է ներդնի յուրաքանչյուր ճշմարիտ հայ-քրիստոնյա, ով իսկապես մտահոգված է իր ազգի ու երկրի ապագայով:

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ԶԻՆՏԱՆԻՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517 197

Էլ. փոստ՝ gh@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 19.8.2014 թ.

Տպաքանակ՝ 2100

Գինը՝ 50 դրամ